

պիտի չունենայ. սակայն հաղիւ խորհրդարանին ներկայացուած էր, և անդէն ընդունելի եղաւ 327 քուէով ընդդէմ՝ 22ի :

Այնքան զայրացիր էր ընդհանուր կարծիքն, որ ընդգիմակաց իւրանտացի երեսփոխանք այս անուանի նստին միջոց դուրս հանուեցան, որպէս զի ուղղորդութիւնը չարգելուի :

Այսպէս 'ի զուր փորձեր էին 'ի դուրս հանել Ագարակային դաշնակցութիւնը, զոր չէին կրցած կատարել Օ' Բոնէի իրեշատոր գումարումներն, Օ' Պրիէնի անձնանուիրումն. և քէվլընտի ռ. Պըրըի գերեզմանները առ ժամանակ հանգստարան մը եղան իւրանտական խնդրոյն :

Էս սակայն տակաւին չիմացուեցան մայիսի 6ին եղբրան բուն պատճառն. զանազան անձիք բռնուեցան իբր կասկածաւորք և արձակուեցան. 'ի զուր Պետութիւնը 250,000 ֆրանք խոստացաւ տանողին. ցարդ մոլթ ստուեր մը պա-

տած է դաւաճանութեան վրայ. միայն այսօրոք յայտնի կրնայ համարուիլ, որ կոյր կրից հետեանք մ'էրք և ոչ քաղաքագիտական կամ հայրենասիրական վրէժխնդրութիւն մը :

Բայց արդեօք Ուղղութեան հրովարտակով լմնցաւ իւրանտական խնդիրն : — Այնքան բազմաթիւ են պատմական օրինակք՝ որ չեմ գիտր զորը յիշել, ցուցնելու համար միայն՝ որ եթէ կայ՝ ծը առ ժամանակ միայն ներքեւ ծածկուեցաւ, սակայն օր մը քիչ մը փշուելով նորէն պիտի արժարծի հրգեհ մը յարուցանելու, նա մանաւանդ որ փշոք միշտ պատրաստք են. և Անգղիա որ հիմա զբաղած է եգիպտական խնդիրը յառաջ մղելու և իր պատուովն մէջէն ելլալու, պիտի տեսնենք որ հազիւ զայն լմնցուցած, կրկին պիտի բռնադատուի դարձնելու իր ուշադրութիւնը իւրանտային խնդրոյն վրայ :

Հ. Մ. ՆՈՒՐԻԻՅԵՍ

Շոգեշարժ երգեհուն մը : — Տի Պրոքշալն իրաւարդեղէտ Մէսարնէրը լրագրին մէջ հսկայաձև երգեհոնի մը նկարագրութիւնը կը գտնենք, 'ի Ֆէնսի-դոմէ շինեալ՝ Քէնդըքի մէջ :

Արդեօք ամենին ուշադրութիւն ըրած էք շոգեշարժ գործինքու սուլած ժամանակ հանած զանազան աստիճանի ձայներուն. — Ֆէնսիդոմէի ճարտարարուեստ մը, որ միանգամայն մեքենագէտ է և սիրող երաժշտութեան, նոր օրինակ գաղափար մ'ունեցաւ երգեհոն մը շինելու, որուն եղեգանց մէջ ձայնն չէ թէ օդայ կամ փքոց միջոցով կը ծնանի, այլ ջրային շոգիէն : Յայտնի է թէ եղեգներն մեր երգեհոնաց վրային ներուն չեն նմանիր, այլ շոգայ կաթ սպից սուլելուն դրոշմեամբ. այս տարբերութեամբ միայն որ ձայնն եղեգան մէջ կը ձևանայ, որովհետև աստիճանաւորութիւնը նոյն իսկ եղեգան երկայնութենէն կամ լայնութենէն կը կանոնաւորի :

Սկզբան մեծ գծաւորութիւն ելաւ շոգեշարժ մը դառնելու համար, որպէս զի հաստատուն և կանոնաւոր ըլլայ անոր տրտադրութիւնն. սակայն դիւրաւ հընարքն գտնուեցաւ այնպիսի կերպով մը շինելով ապահովութեան գոնակն, որ միանգամայն երկու պաշտօնի ալ կը ծառայէ :

Առաջին փորձն կատարելապէս յաջողեցաւ. Մըսդը Այալդըրուա (այսպէս կոչի հրեշտակն գործնոյն հեղինակն) ինքնին ուղեց զարնել զայն առաջին անգամ՝ անթիւ բազմութեան մ'առջև, որ խուռն ընթացիր էր անսովոր հանդիսիս : Երգեհոնն, որ դաշտի մը մէջտեղ դրուած էր, իւրացուց զմերձակայս. և որովհետև երեկոյ էր, 7 կամ 8 քիւր մեքը հեռաւորութեամբ լսուեցաւ առ հասարակ հիացմամբ :

Վերջապէս, կ'ըսէ Պրոքշալն Մէսարնէրը, ամերիկեան հանճարն՝ մէկ գործով միայն ամբողջ քաղաքի մը երաժշտութիւն լսել տալու գիւտն ուստի :